ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

Թիվ 980
03 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թ.

<<ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ>> ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Մեղրիի համայնքապետարանի և <<Կոմերցիալ պարտներս>> ՍՊԸ-ի (այսուհետ՝Կապալառու) միջև 11.03.2017 թվականին կնքված<<ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04>> ծածկարգով գման պայմանագրի (այսուհետ՝Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման>> աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար: Համաձայն 18.05.2017 թվականին կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Համաձայնագրի՝ (այսուհետ՝Համաձայնագիր) Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 2017 թվականի հուլիսի 30-ը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ <<Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ բորոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը>>: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝<<Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմանների, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան....>>: Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

Կապալառուն խախտել է սույնպայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), որը կողմերի միջև կնքված Համաձայնաագրով սահմանվել էր 2017 թվականի հուլիսի 30-ը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ <<Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները>>: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ

հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ <<Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>>: Վերոգրյալով պայմանավորված՝ Մեղրիի համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Կապալառուի հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պայամանագրի 6.3 կետի համաձայն Սույնպայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպեսնաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրոամբողջհինգտասնորդական) տոկոսի չափով: Առաջարկվում է Ձեզ Պայամանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տուգանքը՝ 78750 (յոթանասունութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900305081276 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ՄԽԻԹԱՐ ՀԱԲԱՐՅԱՆ***

Կատ.՝ Ա. Արզումանյան